# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

*0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771 www.court.am*

**N ԴԴ -1 - Ե** ԴԴ -3536 Ն-6451

**«** 18 **» օգոստոսի 2025թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**
**ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

**Ի պատասխան Ձեր 14.08.25թ.**
**թիվ 01/8/18307-2025 գրության**

***Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,***

ՀՀ ֆինանսների նախարարի պետական իշխանության մարմիններին ուղղված 2026 թվականի (ներառյալ 2027-2028թթ) վերանայված բյուջետային հայտը (պահպանման ծախսերը) 2025 թվականի պետական բյուջեով հաստատված չափով ներկայացնելու առաջարկության վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 28.12.2024 թվականի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2060-Ն որոշման համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների համար ֆինանսական միջոցները աշխատանքի վարձատրության գծով 2025 թվականի բյուջետային հայտի նկատմամբ հաստատվել են արդեն իսկ շուրջ 800 մլն. ՀՀ դրամով նվազեցված, ուստի 2026 թվականի համար նույն ցուցանիշը պահպանելը կխաթարի դատական համակարգի բնականոն գործունեությունը:

   Ինչ վերաբերում է անձնակազմի օպտիմալացման առաջարկին՝ ինչպես տեղյակ եք, թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաքննիչ ատյանի, թե՛ վճռաբեկ ատյանի բոլոր դատարանները և դատավորները գործում են գերբեռնվածության պայմաններում, և նման պայմաններում, երբ դատավորի կամ դատարանի աշխատակազմից գեթ մեկ

աշխատակից բացակայում է, ապա անհնարին է դառնում վերջիններիս բնականոն գործունեությունը, ուստի այսպիսի պայմաններում, հաշվի առնելով նաև դատարաններ մուտքագրվող դատական գործերի քանակի տարեցտարի զգալի աճի միտումը, և՛ տեսականորեն, և՛ գործնականում անհնարին է դարձնում դատական համակարգում առկա հաստիքների նվազեցման կամ դրանց սոցիալական երաշխիքների նվազեցման դիտարկումը:

2. Կապի ծառայությունների գերակշիռ մասը կազմում են փոստային ծառայությունների ձեռքբերման ծախսերը, որոնք «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 28.12.2024 թվականի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2060-Ն որոշման համաձայն կրճատվել են 50 տոկոսով՝ 2025 թվականի բյուջետային հայտի նկատմամբ, ինչը էլեկտրոնային ծանուցումների միասնական հարթակի բացակայության պայմաններում 2025 թվականին հանգեցրել է դատական համակարգի բնականոն գործունեության խաթարմանը, ինչի արդյունքում փոստային ծառայությունների կրճատված մասը վերականգնելու նպատակով Դատական դեպարտամենտի ղեկավարի 2025 թվականի մայիսի 6-ի թիվ ԴԴ-1 ԴԴ/1758-25 Ե-3301 գրությամբ կառավարության որոշման նախագիծ է ուղարկվել Արդարադատության նախարարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ 2026 թվականի փոստային ծառայությունների գծով ծախսերը 2025 թվականի արդեն իսկ կրճատված ցուցանիշով հատկացնելը կխաթարի դատական համակարգի բնականոն գործունեությունը:

Հատկանշական է նաև այն, որ դատական համակարգի տարեկան բյուջեի ընթացիկ ծախսերի գերակշիռ մասը կազմող աշխատանքի վարձատրության գծով ծախսերը՝ 2026 թվականի համար առաջարկվող բյուջետային ծախսերի անգամ 2025 թվականի հաստատված չափով ներկայացնելու սցենարը կհանգեցնի դատական համակարգի բնականոն գործունեության խաթարմանը, քանի որ այն ուղղակի ազդեցություն է ունենալու դատական համակարգի աշխատակիցների սոցիալական երաշխիքների վրա:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Բարձրագույն դատական խորհուրդը 2025 թվականի մայիսի 12-ի նիստի ընթացքում իրականացրել է Բարձրագույն դատական խորհրդի 2025

թվականի մարտի 3-ի թիվ ԲԴԽ-16-Ո-25 որոշմամբ հաստատված Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2026 թվականի բյուջետային հայտի վերանայման վերաբերյալ հարցի քննարկում (2025 թվականի մայիսի 12-ի նիստի արձանագրությունից քաղվածքը Դատական դեպարտամենտի ղեկավարի 2025 թվականի մայիսի 16-ի ԴԴ-1-Ե ԴԴ/1905-25 Ե-3618 գրությամբ ուղարկվել է Վարչապետի աշխատակազմի ղեկավարին), որի ընթացքում մերժել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 02.05.2025թ. թիվ 02/16.4/14250-2025 և ՀՀ ֆինանսների նախարարի 25.04.2025թ. թիվ 01/8-5/9578-2025 գրություններով ներկայացված առաջարկները՝ 2026 թվականի հիմնական հայտի համեմատ ընդհանուր ծախսերի նվազեցված ծախսային սցենարների ներկայացումը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հայտնում եմ, որ դատական համակարգը օրենսդրական և այլ հարթակներում լուծումներ չի գտնում բյուջետային ծախսերի նվազեցման համար, միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ եթե Կառավարության կողմից կլինեն բյուջետային միջոցները նվազեցնելու վերաբերյալ համապատասխան առաջարկություններ, ապա Դատական դեպարտամենտը պատրաստակամ է մասնակցել աշխատանքային քննարկումների՝ վերոնշյալ սցենարի կազմման այնպիսի լուծումներ գտնելու նպատակով, որոնք համատեղ քննարկումների արդյունքում երկուստեք ընդունելի կլինեն և չեն խաթարի դատական համակարգի բնականոն գործունեությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատ.՝ ֆինանսաբյուջետային վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511790, 511789